

Ծանոթ. — Այս յօդուածը դրուած է ի սկզբան ֆրանսերէն իբրեւ ըմբռնութիւն ու հրատարակուած Նանտիի աշխարհագրական Société de Géographie de l'Est քննարկութեան հանդէսին մէջ :



ՄԻԱԹԵԻ ՀՈԳԻ

Երբեմն կ'ուզեմ Թրոսիի դէպ ի վեր կապուիտն մէջը իբրը նոր ոգի , Մոռանալ աշխարհն եւ իր թիւր ցաւը որոնց ամէն ինչ դարձեր է գեղի :

Կ'ուզեմ գետնաբարշ ըստոր նախանձին փոխարէն զըրկել հրեծուանքը անսել , Զագրի ու գրծուած պաշտուումը եսին Կործանել հոնկէ շանթերով հանել :

Հոն , վերը Թրոսիի եւ աստուածային Կ'ուզեմ պատգամ տալ սիրոյ եւ գոհի , Անխառն վայելքի զըրկել ջինջ ոգին որ արցունքները փոխարկէ ժպտի :

Բայց , ափսոս , հոգիս լոկ մէկ Թեւ ունի , Զի բաժնուած է իր մէջ երկուսի , Իր մութ բանտին մէջ մէկ մասն հոս կ'ապրի , Միւսը դէպ ի վեր Թրոսի կը ձգտի :

Ու ես կը տանջուիմ Թափիս մէջ անգոր ձիւղ այնպէս երբոր արծիւն միայն եւ ուզէ սրանալ դէպ անհոնին խոր Բայց կը տանջուի Թեւէն վիրաւոր :

ԳԻՇԵՐՆ Է ՄԸԹԻՆ

Ե . . . ի յիշատակի

Գիշերն է մութին . ամպերը յըղի՝ Բոցալից շանթեր կը ցանեն չորս դին Գիշերն է մրուայլ . Ծովը կատարի Անտանձ կը ծեծէ ծայռերն անազին :

Գիշերն է մութին . Գրգռու ու նեմրուծ Խորունկ քունեանին Թօթափած հրգոր , Կը գոռան ուժգին ամպերու տակ մութ՝ Բարեկութեան բոցիւր ցանելով բոլոր :

Գիշերն է խաւար , եւ մարդիկ գազան Խըրտած դուրս կ'ելլեն որջերէն անթիւ . Մութին դաշնակից , Ծարակ արեան , Հըսկայ զոհ կ'ուզեն , աւեր անհաշիւ :

Գիշերն է մրուայլ . գիւղը ամայի Կը ծրխայ անդուռ բոցովն արեւի . Գիշերն է խաւար . գոչիւններ վայրի Կը սքվռեն քանդուած եւ մահ կատարի :

Գիշերն է մրուայլ , փոթորիկն հրակայ ,

Կը գոռան ամպեր , կը մոռնէ հեղեղ , Բրնուծեան տուրն ալ կ'աւազէ անխնայ Չորս կողմն աւերած եւ արեւն անսել :

Գիշերն է մրուայլ , գիշերն անողորմ . . . Եունան եղերը չունի Թեւ Թիկունք : Վոյմակը Գուրդի անգուսպ իբրը հողմ Կ'սուրայ ետեւէն : Կուլայ մահ-արցունք :

Գիշերն է մրուայլ , Ծովը կատարի . Երկինք եւ երկիր կ'ոռնան բարկաճայթ . Մրտերիմ կ'մայնեն ալիքներն աղի , « Մեզ մօտ ե'կ , եղեր , հոստեղ է ազատ . . .

Գիշերն է մութին , Արիանայ սարէն Զայրույթի շանթեր կ'իջնեն անընդհատ . Ալիքներն ուժգին ալիք կը քանդեն , Եղերի արեւն կուլան յուսահատ . . .

ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՔԵԱՆ



ՃԱՅԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ ՓԱՐԻՋԻ ՄԵՋ

Փարիզի Հայկական Միութիւնը Փետր. 8ին տուա Սալ Հոյի մէջ Նուագանդէս-պարահանգէս մը : Նուագանդէսին կը մասնակցէին Տիկին Արժոն-Լէպլը՝ մեծանուն ողբերգուհին , Գոնտերվաթուարի աշակերտներէն՝ Օր. Սեպրոն-Նորպէսն՝ ապագայ ատող մը , եւ պարթիւն Լէոն Փոնգիւ , Պ. Տերան Ալիքսանեան , Տիկին Սվազեան , ամուսինը ծանօթ ազգային գործիչ Միքայիլ Սվազեանի եւ որ ի յայտ բերաւ սոփա ընտրած զմայիլէի ձայն մը եւ զգայուն երգեցողութիւն , Պ. Կրիթիլեան՝ Օտէնէն՝ որ արտասանեց Յովն. Թումանեանի « Լուսաւորչայ կանթեղ »-ին եւ Աւետիք Իսահակեանի « Որսկան աղբէր »-ին ֆրանսերէն թարգմանութիւնը , Պ. Մարտառեան , որ արտասանեց Պ. Զոպաեանի « Սիրտ մարդկային » թերթուածը , Պ. Ա. Շաւ-Մուրատեան , որ ի հոյակապ ձայնով երգեց Կոմիտաս վարդապետի ձայնագրած « Ինչպե՞ս րուն , եկաւ աշուն » պաշտօնի ժողովրդական երգը , ինչպէս եւ Սիկիւրի կտոր մը :

Փարիզի Հայ Աշխատաւորաց Միութիւնը փետր. 13ին Սալ Հըմուանի մէջ տուա սրտուն Նուագանդէս-թմարտ մը . Երկրանդատ արտասանեց շատ ծափահարուած ըմբռնութեան թիւն մը , նիւթ ունեւարով՝ Ռուսն ու Հայու թիւնը , Նուագանդէսին մասնակցեցան հայ եւ օտար արուեստասէներն եւ արուեստագէտներ :

Փարիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Մարտ 8ին Սալ տէ-գ-Ալիքի թիւ 20-ի մէջ տուա Նուագանդէս-պարահանգէս մը .

A.R.A.R. @

Նուազանդէնին կը մասնակցէին Պ. Ալեքսան-
եան, Սր. Կլատիս Մաքսանս Օտոնէն, և
խուժը մը հայ եւ ֆրանսացի արուեստաւէրներ
Փորթի շայ Ս. սանդական Միւթիւնը
Մարտ Չէին ժողովարար արաւին մէջ տուաւ զուս-
կանական վերաբերմով երկուրէն մը ։ Գանի մը
ուսանողներ մէկ լաւի արուեստաւէրներու հետ
խաղացին Պարսկեանի Արեւելեան Ասամեքոյ-
մին առաջին տարուածը գրեթէ ամբողջու-
թեամբ եւ Պէլիթայիանի Նիւէ Բարձրը ։ Եր-
գեցին՝ ղեկավարութեամբ Պ. Ա. Շահ-Մուրա-
եանին՝ 6-7 հայ ժողովրդական երգեր, արու-
եստեցին Յովհաննէս Թումանեանի, Պետրոս
Խոսրովի բանաստեղծութիւններ, Պարսկեանի
« Թուրքիւն և Աւանակ », ու « Ալիսիանի »
« Ինչու չեմ ամուսնանա » րը ։ Չ. Զաքարեան
արուեստեց բանաստեղծութիւն մը, Նիւթ ունե-
նալով « Պոյոյ մը հայ գրականութեան եւ գե-
ղարուեստի շուրջ » ։ Գնացող ցոյց տայ ազգի մը
համար գրականութեան ու գեղարուեստի կական
կարեւորութիւնը, ընդունել տեղը եւ զիրքը զոր
հայ ցեղը կը գրաւէ տիգրայական գրականու-
թեան ու գեղարուեստի մէջ, եւ զգացնել պէտքը
զոր ունի հայ ժողովուրդը՝ իր մասը որ ու գե-
ղարուեստական զարգացումը մղում տալու ։ Կը
կրտատարակէն ստորեւ այս բանաստեղծեան
գիրը արանը ։



Տիգրայներ, Պարսկեր,

Հայ ցեղը իր ճակատագիրը գեւ չէ լրացու-
ցած ։ Այդ աշխարհ ցեղը, որ, հազար փորձանքի
եւ աղէտքի մէջէն միշտ կը մնայ կենդանի,
ապացուցած է, յաճախ, որ կարող է արտադ-
րել հերոսներ եւ տաղանդներ ։ Այս ցեղին մէջ
կայ կրողով, եւ կայ գեղարուեստական կարու-
ղութիւն ։ Կարելի է ըսել թէ այդ ցեղը ունի
գրեթէ ըրտը տարրեր որ պէտք են մեծ ազգ
մը կազմելու համար. ներքին ու արտաքին կարգ
մը ձախտը պայմաններ թոյլ չեն տուած որ
ցարդ եր ցեղն ըլլայ իսկապէս « մեծ ազգ » ։
Հին, բայց չէ ձերայած Հայ ցեղը ։ Մշտական
վերանորոգումներու կարող է ան ։ Չնքց գիտեր
ինչ որ ապագան կը վերապահէ անոր, բայց կա-
րելի է, եւ մենք պէտք է այդպէս հաւատանք,
որ ապագային մէջ ան իր ուժերուն չափը տայ
աւելորդ լայն, հոգը եւ ապա տիրողը քան ինչ
որ ըրած է ցարդ. թերեւս իրեն է վերակուած
որ մը՝ Մերձագոր Արեւելքի ամենէն արուես-
տագէտ, ամենին ազատաստիւ ու քաղաքակը-
թի տարրը ըլլայ. ինչ որ արդէն իսկ եղած է
ցարդ՝ բաւական յարգելի չափով ։

Չի բուեր սակայն որ ան շատաւոր ատոր
եւ ցանկեղք զայդ. պէտք է ամենքս աշխատե՞նք
մեր ուժերուն տեսակին ու չափին համեմատ՝ որ
այդ ցանկալի հետապալելուն իրականանայ ։

Դուք մտնանք, հայ ուսանողներ, դուք
որ այս հայ գրական երկուրէն կազմակերպելով
սպաւոր ցիք ձեր աշխարհ ու անձնութիւնը դէպ

ի ձեր ազգը, ձեր լեզուն ու գեղարուեստը,
դուք որ վաղուան Հայութիւնը պիտի ըլլաւ,
դուք պարտականութիւն ունեց աւելի շնորհ
երթալու քան ինչ որ մանացին ու կըրան ձեր
նախորդները, Շատ աւելի քան երկանիւր,
ազատ ու հոգի ազգերու. դասակները, դուք
պարտաւոր էք աշխատել, որովհետեւ զուսկ-
ներն էք զգաղը ու բաղաձայարար, հազար
պէտք ու հազար ցաւ. ունեցող ժողովրդի մը ։
Ինչ ալ ըլլայ միւրը որուն նուիրուած էք, ինչ
ալ ըլլայ ընկերական կամ իմաստասիրական
վարդապետութիւնը որուն յարած էք, ձեր սըր-
տին մէջ բարձրագոյն պէտք է միշտ տիրէ սէրը
այս թշուառ ազգին եւ զայն ազատութեան
մեծութեան ու փառքի բարձրացնելու ցանկու-
թիւնը ։ Ազգասիրութիւնը միշտ եղած է ունի
իսկ հոգը ազգերուան համար՝ միծուխն ու
փառքի ստեղծելով ուժ, բարոյական առաքինու-
թեանց աղբիւր, հանձնորք բեղունաւորող ու զօ-
րացնող ներշնչարան, բայց մտնաւանդ սորոկի
ու հալածում ազգերուն համար, ան անհրա-
ժեշտ, հիմնական ու նուիրական զգացումն է՝
զոր ունենաւ եւ զարգացնել անխուսափելի պար-
տականութիւն է ամէն աշխարհ, վիհանձն ու ար-
ժանապատուութեան զգացումը տաճից անհատի
համար. ինչ ապագայից ալ որ նուիրուի, միշտ
հետաքրքրեցէք ձեր ազգի ճակատագրով, սի-
րեցէք ձեր գեղեցիկ լեզուն, սիրեցէք հայ գրա-
կանութիւնը, հայ գեղարուեստը, եւ անուց
զարգացմանը նախանձախնդիր եղէք ։

Հայ ժողովուրդը ունի սուսած էին ու նոր
աւանդներու մէջ՝ տաղանդներ, բայց իսկական
« հասարակութիւն » (public) մը կարելի չէ ըսել
թէ կայ Հայոց մէջ, կան անհատներ, խումբեր
իսկապէս գրասէր, գեղարուեստասէր ։ Կորս
միւրեն Հայութեան մէջ ատոնք՝ տեսակ մը
փոքրիկ ուժասիրտներ են. եթէ այդպիսի չլլար,
Պարսկեանի պէս հեղինակ մը՝ օրինակի համար
սիրքան մատչելի, զուարճալի, ամենին համար
հասկանալի, օգտակար եւ ստորիւնով, պէտք
չէր որ զարգատ ու կարտ մնենէն. իր զաւակ-
ները, որ մնային խեղճ (ու եթէ չլլար սքան-
չելի Պէրպէրեանը, վարձապետ մը, որ զանտե՞
ր զայդպիսիներէն անկախ անկ առաւ, անօթի-
նաւ կ'ըլլային) այդ զաւակները պէտք էր իրենց
հորը տաղանդին շնորհիւ՝ ապրիտ շատ ապա-
հով միջոցներ փոխառած ըլլային ։ Այո՛, չկայ
հայ իսկապէս գրասէր « հասարակութիւն » մը.
դուք, վաղուան Հայութիւնը, պիտի կազմէք
զայն ։

Իսկ ձենէ անտեղ, բարեկամներ, որ դրա-
կան կամ գեղարուեստական ձիրք ունին, զայն
զարգացնելով հանդերձ ընդամենը գրականու-
թեան ու գեղարուեստի դասերով, թող մաս-
նաւորապէս ուշադրել ըլլան եւ աջակցին հայ-
կական հին ու նոր ինքնուրոյն գեղարուեստի
բոլոր տարրերուն երևան ելլելուն, որպէս զի
որ մը մեր իշխողներուն ծանօթ ըլլայ ինչպիսի
ամէն ինչ որ հայ տաղանդը արտադրած է իր
ուրոյն ստեղծագործութեամբ. ու թող մանա

որ մեր գրականութիւնն ու գեղարուեստը այստեղ հետեւ այդ զուտ հայ տարրերով աւելի ճոխ ու ինքնատիպ դառնայ :

Ամենքս, ամենքս, Տիկիներն ու Պարոններ, մենք որ այստեղ հաւաքուած ենք, ու մեր բոլոր եղբայրները որ այնտեղիս ամէն կողմը գրուած են կամ հայերէնի մէջ կը տքնեն, աս մենքս միացած սիրովն Ազգին, ցանկութեամբ մեծութեան եւ ազատութեան, պէտք է աշխատինք՝ ամէն ոք իր կրցած ձևով՝ բայց իր բոլոր ուժերովը, որպէս զի մեր տաղանդաւոր բայց զբաղւող ժողովուրդը հասնի աւելի երջանիկ ու իր զարգացման համար նպաստաւոր պայմաններու, եւ վաղուան Հայութիւնը կարենայ լիակատարօրէն տայ չափի հայ մասւոր ու ժողովուրդին, եւ մեր գրականութեան եւ գեղարուեստի ծաղիկը, հնազանդ աւելի ինքնատիպ, շքեղ, երբայնտեղս ու բուրբմաւէտ, յաղթական կանգնի մարդկային Հանճարին մեծ պարտէզին մէջ :

Ա. Չ.



ՎՈՉ ՄԸ

Կովկասի Հայոց ազգագրական ընկերութիւնը մեզ ուղարկած է չափեկան կոչ մը զոր կը 'հրատարակենք ստորեւ . այդ ընկերութիւնն ու իր օրկանը՝ Պ. Լայպիսիւնի ձեռնհաս ու եռանդուն անօրէնութեամբ 'հրատարակուող Ազգագրական Հանդիսը' մեր ազգային մտաւոր կեանքին ամենէն սիրելի ու միանշանակ երեւոյթներէն են : Հայ ազգագրական-հնագիտական թանգարանի մը հիմնարկութեան նախաձեռնութիւնը զոր կը ստանձնէ այդ ընկերութիւնը, մեծապէս կարեւոր է, եւ ամէն Հայ պէտք է աջակցի այդ ազգոգութեւ ծրագրին իրականացման :

...

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը ի նկատ առնելով այն ահագին նշանակութիւնը որ ազգագրական-հնագիտական թանգարանը ունի թէ՛ մի ազգի ինքնուրոյն զարգացումը եւ թէ՛ ընդհանրապէս մարդկութեան էվոլյուցիան բնորոշելու համար .

ի նկատ առնելով՝ որ համաշխարհային քաղաքակրթութեան չնորհի հայի առանձնաշատուկ կեանքը, նրա ազգային գգնատիրքը, պարագիծերի գործիքները, նրա ու կայքը, սովորութիւնները մեծ արագութեամբ փոփոխութեան են ենթարկուած :

ի նկատ առնելով, մշակուող հողի սակաւ

ւութեան պատճառով դարերից ի վեր անեղծ մնացած դամբանները այժմ հերկուած են, եւ այս պատճառով նրանք կա՛մ կորցնուած են այն նշանները, որով հնադէպները հնարասութիւն ունեն որոշելու են պեղելու, հետեւապէս եւ մնալու են գետնի տակ անյայտ, կա՛մ բացուած են եւ նրանք մէջ եղած հնագիտական իրերը ընկնելով գիւղացիների ձեռքը՝ ոչնչանում են, կորցնում իրենց գիտական արժէքը :

Որոշիչ նախապարտաւորութիւններ տեսնել մի Ա.Չ.Գ.Ռ.Կ.Ա.Ն.-Հ.Ն.Գ.Բ.Տ.Ա.Կ.Ա.Ն. Թ.Ա.Ն.Գ.Ռ.Ա.Ն. հիմնելու :

Այս նպատակով հրատարակեց մի « Ծրագիր Հայոց Ազգագրական թանգարանի համար 'նիւթի' հաւաքելու », պատասխանեց տպագրուած եւ ժապաւնուած մատենաներ՝ պեղուած, դրնուած եւ նուէր ստացուած իրերը ցուցակագրելու համար եւ ուղարկելով ընկերութեանն ճիշդերին՝ յանձնարարեց հիմնել թանգարանական պահեստարանները եւ հաւաքել ազգագրական-հնագիտական իրերի Մի այսպիսի պահեստարան եւս այստեղ, Թիֆլիսում, հիմնելով, Ընկերութեանն ինքնուրոյն յոյս ունի որ, որ մօտիկ ապագայում, երբ բաւականաչափ իրեր հաւաքուած կը լինին, Ազգագրական Ընկերութեան կենտրոնի եւ ճիւղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողովը կը գումարի՝ որոշելու թէ՛ ո՛ր պէտք է հիմնել այդ թանգարանը, ուր եւ անմիջապէս կը տեղափոխուեն այդ բոլոր տեղերում հաւաքուած իրերը :

Միեւնոյն ժամանակ ինքնուրոյն ի նկատ առնելով ընդհանրապէս մարդաբանական գիւտութիւններին եւ մասնաւորապէս կովկասագիտութեան վերաբերեալ գրքերի անհրաժեշտութիւնը Կովկասի ուսումնասիրութեամբ պարապողներին համար իւր ներկայ տարուայ յունուարի 4-ի նիստում որոշեց բանալ Թիֆլիսում ՄԱՐԳԻՆԱՅԻՆԱՅԻՆ-ԿՈՎԿԱՍԻԱՅԻՆ ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ՝ օգտուելով այն հանգամանքից, որ ինքնուրոյն անգամ Ե. Լայպիսիւնի, այդ գիտութիւնների վերաբերութեամբ բաւական հարուստ իւր գրադարանը (մօտ 5000 ր. արժողութեան) պիտի է Ընկերութեանն տրամադրութեան տակի Յայանդով Հայոց Ազգագրական Ընկերութեան այս որոշումները՝ խնդրում ենք յարգելի հաւարակութեան անպեղծելի :

Նախագահ՝ Արեւիկեղ Մեղիֆ-Աղաբեան
Փ. Նախագահ՝ Տ. Նույսիւնյոյ Մարտիրոսեան
Գանձապահ՝ Առաքել Սարգիսեան
Անդամներ՝ Տ. Նասախա Նունուֆարեան,
Եփեմ Մասուրեան, Մանգուկեան
Խոնուրեան, Յովսէփ Տէր Խաչեան,
Բրիտանիոյ Տէր Սարգիսեան

Անդամ-Բարտուղար՝ Երուանդ Հայաթեան
Հասցէ՝ Arakel Saruchian, Tiflis (Caucase).

